ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ

ՓԱՂԱՔԱՑԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԻԹՄԸ

Արտաքուստ կյանքը քաղաքում խաղաղ է թվում: Խաղաղության այդ պատրանքն ավելի է թանձրացնում աշունը՝ իրադրության անտեղյակ բարեխղճորեն կարմիր-դեղին ներկելով ծառ ու թուփ, խշխշան գորգեր փռելով մայթերին: Բայց հենց հանդիսատեսն ես փողոցներում աչս ու աչն ընդ պարեկող զինվորներին, անցնում աշխատանքային ապրանքների փակ խանութների մոտով, նկատում տաքսիների բացակայությունը երթուղիներում, և իսկույն երևան է գալիս այդ հանդարտության ողջ խաբուսիկությունը: Մոտ մի ամիս է, ինչ շարունակվում է գործադուլը: Վիճակը շարունակում է մնալ լարված, չափազանց բարդ: Այնինչ, սպասվում էր, որ ազգամիջյան հարաբերությունների հարցերի առնչությամբ ՍՍՀՄ Գերագույն սովետի Ազգությունների սովետում ստեղծված հանձնաժողովի անդամ-դեպուտատների խմբի՝ աշխատավորների հետ ունեցած հանդիպումները, անկեղծ, արտաքաց զրույցները քիչ թե շատ կթուլացնեին լարվածությունը: Սակայն դա տեղի չունեցավ, չնայած մարդկանց մեծամասնությունն, իրոք, դեմ է գործադուլին, գտնում է, որ դա չէ հարցի լուծման ընդունելի միջոցը: Այդ դեպքում ինչո՞ւ շարունակում են այն: Վախենում են նորից հուսախաբ լինելուց՝ այսպես մեկնաբանեցին երևույթը կուսակցության Ստեփանակերտի քաղաքային կոմիտեում տեղի ունեցած խորհրդակցությունում հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներից շատերը: Դրանով բացատրեցին կոլեկտիվներին աշխատանքի դուրս բերելու իրենց ջանքերի զուր անցնելը:

Խորհրդակցության օրակարգում, որին մասնակցում էին տնտեսական ղեկավար աշխատողներ, կուսակազմակերպությունների քարտուղարներ, ծանոթ, բազմիցս քննարկված հարց էր. ինչպես վերականգնել աշխատանքային նորմալ ռիթմը, դուրս գալ ճգնաժամային վիճակից: Փորձում էին տալ ուղիները: Մոտավորապես այսկերպ. թույլատրել միտինգ-ցույցեր անցկացնել, վերացնել պարետային ժամը, մարզի սահմաններից դուրս բերել «փչախտական» ադրբեջանցիներին... Սկսվեց լուրջ երկխոսություն դահլիճի ու ժողովի նախագահության միջև: Զարհուրանք լուրջ ու անհրաժեշտ: Սուտ խոստումներ չեղան: Նշվեց, որ բանի հատուկ դրություն է մարզում, կոնկրետաբանապես արգելվում են միտինգներն ու ցույցերը, և նրանք, ովքեր պնդում են դա, կամենում են, թե ոչ, ավելի սրում են իրադրությունը, խորացնում լարվածությունը: Ձեռնարկությունների աշխատանքի անցնելու հետ պարետային ժամը ատիճանաբար կկրճատվի: Ինչ մնում է եկվոր ադրբեջանցիներին, կուսակցության քաղկոմի առաջին քարտուղար Զ. Մովսիսյանը խոստովանեց. կան հարցեր, որ իրենք ի զորու չեն վճռելու:

Յուրաքանչյուր տնտեսական դեկավար դարաբաղյան շարժման գաղափարակիրն է և եթե նա չի կարողանում ետևից տանել իր կոլեկտիվը, նշանակում է խափանում է հարցի լուծումը: Այս միտքը, որ մի անգամ չարտահայտվեց խորհրդակցությունում, նկատելիորեն հուզեց դահլիճը: Արտադրական ավտոտրանսպորտային միավորման գլխավոր դիրեկտոր Բ. Դադամյանը առաջարկեց այլ եզրից մոտենալ խնդրին, ընդունեց, որ ներկա պայմաններում միշտ չի հաջողվում իրադրության տերը լինել իրենցից շատերին: Կոլեկտիվի 70 տոկոսը, նշեց նա, աշխատում է, իսկ ահա տաքսիստների հետ լեզու գտնել չի կարողանում: Ու դա ամենևին չի նշանակում, թե ինքը խրախուսում է գործադուլը:

—Շատերն այստեղ խոստացան երկուշաբթի կոլեկտիվը հանել աշխատանքի: Ցասե՞մ, որ կասկածում եմ: Խոստանալը բիչ է: Այսօր հարկավոր են կոնկրետ, կշռադատված վճիռներ, բայլեր ի շահ մեր գործի: Պետք է աշխատե՞լ: Համաձայն եմ, բայց բոլորս միասին դուրս գանք: Ռեալը դա է: Հակառակ սպասելիքի դարձյալ ոչինչ չի ստացվի:

Պիտի աշխատել: Մեծամասնությունն էր այս մտքին: Առջևում այսպես է, իսկ այնքան անորոշ բնակելի տները դեռ կիսատ-պրոսատ են, կարգի չի բերված ջեռուցման սիստեմը, ջրամատակարարման գործը վատ է կազմակերպված: Ճանապարհները կիսապատռած-կիսակառույց են: Հայրենասիրությունը միտինգների թվաբանակով չէ, որ պիտի չափել, այլ գործով: Հարկավոր է աշխատել, որ ձմռանը բնակարանը նորմալ երակազարկ ունենա, չկորվի մարզկենտրոնի կապը շրջանների հետ:

Դարձյալ հավատամք, որ օրս կարգում, ինչպես քանի անգամ առաջ, նույն պրոբլեմն է՝ դուրս բերել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից: Սակայն ուժի դիրքից, գործադուլների միջոցով այն լուծելու փորձերը հազիվ թե կոնկրետ արդյունք տան: Գործադուլը շարունակելը հավասարազոր է հարցի լուծումը խափանելուն:

Երկուշաբթի դուրս կգա՞, արդյոք, քաղաքն աշխատանքի: Այո կամ ոչ պատասխանելը շատ է դժվար: Մի բան ակնհայտ է. պրոբլեմի լուծման ձգձգումը միայն խորացնում է ճգնաժամային վիճակը:

Խորհրդակցության աշխատանքին մասնակցեց և հույժ ուշագրավ կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի առաջին քարտուղար Հ. Ա. Պողոսյանը: